

աւարտման պաշտօնին մեծաւ յուղարկաւորութեամբ համօրէն միաբանիւք թաղեցաւ ի զերեզմանատան սրբոյն Յուստոսի:

Աստուածատուր Վ. Բարիկեանց Արքեպ. Էջմիածնի եւ Արքայ եւն: (Ձեռ. Թ. 454, թղ. 45բ—46ա:)

Հ. Սամէլեանց ծնած է Կ.Պոլիս 1784ին, մկրտութեան անունն է Յովհաննէս: Քահանայական ձեռնադրութեան կ'արժանանայ 1806 Օգ. 15ին:

11. Անոր մահը իր ծանրութեամբը զեռ կը ճնշէր միաբանակից եղբայրներու սիրտը, երբ քանի մը ամիս յետոյ ուրիշ սուր մը զայն կը խոցոտէր:

1810 Հոկտ. 20ին կեանքի դարունին մէջ կը խամբէր՝ էՄԻՐՉԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Եւրոկիացին, որ զոնէ միթիթարութիւնն ու երջանկութիւնը կ'ունենայ Միթիթարեան միաբանութեան անդամակցելու ուխտերով ինքզինքը պարաւանդելով:

12. Տասնուերեք տարի յետոյ Տրիեստի մէջ՝ 1823ին կը մահանայ Հ. ՊՕՂՈՍ ՃԱՆՃԵԱՆ կամ ՄՈՒՐՍԵԱՆ, Կ. Պոլսեցին, որ Միթիթարեան քահանայ ձեռնադրուած է 1796 Դեկտ. 17ին, բայց Միաբանութենէն հեռացած է 1818ին:

13. Այնպէս կը թուի թէ առողջութեան համար Տրիեստ օգտօրէնութեան անցած է եղբ. ՄԵՍՐՈՊ ԹՕՍՈՒՆԵԱՆ Միթիթարեան միաբանը եւ հոն 22 տարեկանին՝ երկրէ երկինք փոխուած 1844 Մարտ 22ին:

14. Վիենն. Միթիթարեան Միաբանութեան բոլոր անդամներու եւ Վիեննացի ժողովրդեան հոգին սաստկապէս կը ցնցէ զոյժը, թէ Հոռոմէն վերադարձին անվերադարձօրէն այս աշխարհէս մեկնած է՝ Գեր. Հ. ՎԱՐԴԱՆ ԸՍՏԿԱՐԵԱՆ, Արքեպիսկոպոս եւ Ընդհր. Արքահայր Վիենն. Միթիթարեան Միաբանութեան: Այս տեղի կ'ունենար Տրիեստի մէջ 1886 Յունիս 23ին:

Անոր կենսագրութիւնն ու զործունէութիւնը՝ հանրածանօթ, հետեւաբար այսօր քանը՝ բաւ<sup>14</sup>:

15. Նա իր կենդանութեանը — երկու տարի յառաջ 1884ին — սգացած էր մահը

<sup>14</sup> Հմմտ. Ակիւնեան Հ. Ն., Ակնարկ մը Վիենն. Միթիթարեան Միաբանութեան զբաղանջներուն վրայ, Վիեննա 1912, էջ 12—13:

Հ. ԳԷՈՐԳ ՓԻՐԱՉԵԱՆԻ, որ ծնած է Նորտորջուր 1861ին, քահանայ ձեռնադրուած՝ Վիեննայի մէջ 1881 Հոկտ. 30ին եւ Տրիեստի մէջ խաղաղութեամբ ննջած 1884, Սեպտեմբեր 11ին: Տրիեստի B. M. V. Auxiliis (կոչուած նաեւ Antonio Vechio) եկեղեցւոյն Liber mortuorumի մէջ (հար. Բ., էջ 13) գրուած է «123 (1884 Sep. 11 tum. 12 Sep. Via Giustinelli 4, Pater Georgius Pirazian, Mechitarista, Cath. anno 23, Vitium cordis. R. D. Pater Mechitarista»:

Հ. Փիրազեան թարգմանած է Քրիստոնէական մը, որ տպագրուած է Վիեննա, 1884 եւ 1909:

16. Տրիեստի մէջ հայ եկեղեցական վերջին մեռեալն է՝ Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ԳԱԹՐԸՆԵԱՆ՝ որուն մահուան եւ յուղարկաւորութեան մասին վերոյիշեալ մատենին մէջ կը կարդանք՝ «Anno Domini 1895, mense Aprily die 12, Via Madona del Mare 3 (obiit et die) 13 (peractis ritu catholico a) Dr. Hup. Mioni, Coop. M. R. D., Dr. Samuel Catergian, Pater (Parochus) Mechitariste (aetatis anni) 68 (menses) 9 (masculus) sac. (morbus seu causa morbis) nefridis cronica»:

Հ. Սամուէլ եղբայրն է մեծանուն Հ. Յովսէփ Գաթրճեանի, ծնած է Կ. Պոլիս 1827 Մարտ 19ին, քահանայ ձեռնադրուած 1841ին, վարած է զանազան պաշտօններ, երկար ատեն զործած է Տրիեստի մէջ՝ Աշխատակցած է «Եւրոպա» թերթին եւ լոյս ընծայած՝ «Տարւոյն չորս եղանակք» ղեղեցիկ գրութիւնը: Նաեւ ըրած է դասական լեզուով թարգմանութիւններ<sup>15</sup>:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

<sup>15</sup> Հմմտ. Ակիւնեան Հ. Ն., Գասական Հայերէն եւ Վիենն. Միթիթարեան դպրոցը, Վիեննա 1932, էջ 357—362:

### ՅՈՒՅԱԿ ՀՈՅԵՐԸՆ ԶԵՌՍԳՐԱԿ ԼՂՈՂԻ ԵՒ ՍՏՆԻՐՍԼԵՒՈՎԻ

Ա. Զ. Գ.

«Հանդէս Ամսօրեայ» 1936, էջ 501—512 եւ 1937, էջ 111—150 տուած էի ԼՂՈՂԻ Համալսարանի 23 հայերէն ձեռագիրներու ցուցակը: Այժմ կը ներկայացնեմ ցուցակը այն ձեռագիրներու, զորոնք տեսած էի 1932 յունիսին ԼՂՈՂԻ Հայկական հնութեանց Յուստուգիւնի մէջ: Այն տեղ ցուցադրուած ձեռագիրներէն մաս մը առնուած էր տեղւոյն Հայոց Արքեպիսկոպոսարանի Մատենադարանէն. ուրիշներ բերուած էին Ստանիսլաւով եւ Քաղաքի այլ եւ այլ Մատենադարան-Թանգարաններէ, զորոնք չկրցայ ստուգել:

Ինձ տրամադրուած ժամանակը կարճ էր եւ Յուստուգիւնը բաց էր օրուան որոշ ժամերու մէջ միայն: Այս պատճառ եղաւ որ ամբողջ ձեռագիրներու նկարագրութիւնը չեմ կարողացել ընդհանրապէս նկարագրել: Հնարաւոր չեղաւ ինձ այնուհետեւ միւսանգամ այցելել ԼՂՈՂ, ինչպէս եւ Ստանիսլաւով եւ այլ քաղաքներ նոր ձեռագիրներու ի խնդիր, եւ այս առիթով վերստուգել ցուցակս:

Հայոց Արքեպիսկոպոսարանի Մատենադարանէն երեք ձեռագիր, որոնք ցուցադրուած չէին ցուցահանդէսին մէջ, խընդրանքովս հաճած էր ցուցակագրել ի Մեծ. Հ. Վարդան Վ. Մելիքեանի 1933ին:

1 (24).

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ոնէ = 1197/8:

ԹՈՒՂԹՔ՝ 425: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 29 × 22 սմ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԹ՝ սպիտակ մագաղապ: — ԿԱԶՄ՝ փայտեայ, կարմիր քաւիչով պատուած, արծաթով կոտորած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Թղ. 1 եւ 423—425 վերջին կազմողէն մուծուած: Ընդ մէջ Բղ. 4—5 ինկած է կանոն Բ. 1. ինկած է նաեւ Բղ. 418, որուն տեղ կազմողէն գրուած է դատարկ բուրբ մը: Դատարկ՝ 1ա—2ա. 3բ—4ա. 5ա, 6բ—7ա. 8բ—9ա. 10բ—11ա: — ԳԻՐ՝ խոշոր երկարագիր: — ԽՈՐԱՆՆԵՐ՝ 2բ—10ա (Եսեբեայ բուրբ Բագիր: — ԽՈՐԱՆՆԵՐ՝ 2բ—10ա (Եսեբեայ բուրբ Բագիր, քաղմագոյն ոսկեխտն: — ՆԿԱՐՔ՝ 11բ,

128բ, 205բ, 325բ (չորս աւտարանիչներ): ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ 12ա, 129ա, 206ա, 326ա: — ԼՈՒՍԱՆՑԱՆՔ՝ ԳՐՈՒԹ՝ կիսախորանքաւ լուսանցքներով: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1197/8: — ՏԵՂԻ՝ Մըլիքի վամբ: — ԳՐԻԶ՝ Գրեգոր Մըլիքի: — ՍԵՊՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԼՂՈՂԻ Արքեպիսկոպոսարանի:

Մատենա է Աւտարան. Մատթէոս՝ թղ. 12ա. Մարկոս՝ թղ. 129ա. Ղուկաս՝ թղ. 206ա. Յովհաննէս՝ թղ. 326ա: Ունի վերջաւորութեան՝ Իրք կնոջն չնացելոյ: Գլխաւոր Յիշատակարան. թղ. 417բ—421բ.

- ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Բղ. 28բ: 2. Բղ. 204բ: 3. Բղ. 325ա: 4. Բղ. 421բ—422ա. բոլորգիր: 5. Բղ. 422ա (ուրիշ ձեռքէ բոլորգիր): 6. Բղ. 422ա (ուրիշ ձեռքէ բոլորգիր): 7. Բղ. 423ա—բ (նոյն գրով):

Ձեռագրի մանր նկարագրութիւնը տուած եմ «Հանդ. Ամս.» 44 (1930), 95—112 եւ 200—236, ուր յառաջ բերուած են նաեւ Յիշատակարանն եւ Յիշատակագրութիւնները, նաեւ մանրանկարներէն 13 հատ: Նոյնը արտաստուած հանդերձ զերմաներէն համառոտութեամբ՝ խորագրիս տակ՝ Հ. Ն. Ակիւնեան, Սկիւտութեամբ՝ խորագրիս տակ՝ Հ. Ն. Ակիւնեան, Սկիւտութեամբ՝ 1197 թուականէն ԼՂՈՂԻ Հայ Արքեպիսկոպոսարանի զբաղմանին մէջ. Վիեննա 1930 պիտկոպոսարանի համառոտութեամբ՝ Das Skevra-Evangeliar vom Jahre 1197, aufbewahrt im Archive des armenischen Erzbistums Lemberg, Wien 1930): Հմմտ. նաեւ F. Macler, Rapport sur une mission scientifique en Galice et en Bukowine: Revue des Etudes arméniennes, 7 (1927), 97—105, ուր նմանահանութեամբ արուած են 4 խորան եւ Յիշատակարան-Յիշատակագրութիւնները:

2 (25).

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՉՂԷ = 1348:

ԹՈՒՂԹՔ՝ 271: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 25 × 17,2 սմ: — ՆԻԹ՝ մագաղապ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ փայտեայ, քաւիչով պատուած, արծաթով կոտորած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳՐՈՒԹ՝ — ԽՈՐԱՆՆԵՐ՝ Բղ. 1բ—2ա, 3բ—4ա, 5բ—6ա, 7բ—8ա. 9բ—10ա: — ՆԿԱՐՔ՝ 11բ (Մատթ.), 140բ (Ղուկաս), 221բ (Յովհ.), 283բ (Յեսուս Քրիստոս): Մարկոսի նկարը ինկած: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ 12ա, 90ա, 141ա, 222ա: — ԼՈՒՍԱՆՑԱՆՔ՝ ԳՐՈՒԹ՝ Կիսախորանքաւ լուսանցքով եւ վայելուչ, ՅԱԶԱՐԳՔ՝ ԾԱՂԱԿԱՆՔ՝ բազմագոյն եւ վայելուչ, մեծ յառաջադրումով: Մանրանկարչութիւնը բազմազան եւ շատ յաջող: — ԳՐԻԶ՝ Մելիքեան: — ԾԱՂԱԿՈՂ՝ Առաքել: — ՏԵՂԻ՝ Տապալալը գիւղ: — ԺԱՄԱՆԱԿ (1348): — ՍԵՊՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԼՂՈՂԻ Արքեպիսկոպոսարանի:

